ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՅԻՅԱՆ ԱՐԱՄ ՍԵՐԳԵՅԻ

ՔՐԴԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՆ ԱՐԱՐԱՏԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ (1926-1930 ԹԹ.)

Է.00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»

մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Պետական Համալսարանում

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների
դոկտոր Խուդինյան Գ. Ս.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Ավագյան Ա. Գ.

պատմական գիտությունների
թեկնածու Հարությունյան Ա.Ա.

Առաջատար կազմակերպություն՝ Խ. Աբովյանի անվան Հայկական
պետական մանկավարժական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2015 թ. մայիսի 5, ժ. 16:00, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. ապրիլի 3:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար պ.գ.թ., դոցենտ Ռ. Պ. Ղազարյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը՝ Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի այն կարևոր հանգրվանն էր, երբ տեղի ունեցավ արմատական հեղաբեկում նրա ինքնագիտակցության մեջ: Համաքրդական ազգային կուսակցության՝ Հոյբունի ձևավորումը նպաստելով Արարատի ապստամբության ծավալմանը, քուրդ ժողովրդի պայքարին հաղորդեց քաղաքական հստակ նպատակներ ու գաղափարական նոր ուղենիշներ, որոնց ամբողջական ուսումնասիրությունն ունի ոչ միայն զիտա-ճանաչողական, այլև արդիական-քաղաքական կարևոր նշանակություն:

Արարատի ապստամբության մասին պատմական հիշողությունը Թուրքիայում բնակվող քրդերի համար այսօր էլ շարունակում է մնալ որպես իրենց առջև կանգնած քաղաքական խնդիրներին արմատական լուծումներ փնտրելու գրավիչ օրինակ: Նրա ընթացքում ձևավորված հայ-քրդական զինակցության փաստը խիստ ուսանելի է ներկայումս մեր տարածաշրջանում ծավալվող աշխարհաքաղաքական տեղաշարժերի պայմաններում: Այդ առումով արդիական իմաստ ու նշանակություն է ձեռք բերում 1927 թվականին Հոյբունի և ՀՅ Դաշնակցության կողմից որդեգրված՝ ընդհանուր թշնամու դեմ պայքարում հայ-քրդական տարաձայնությունները մի կողմ դնելու իրողությունը: Է՛լ ավելի կարևոր է երկու կուսակցությունների որդեգրած՝ Սևրի պայմանագրի դրույթներով առաջնորդվելու քաղաքական սկզբունքը: Մանավանդ որ՝ Հոյբունի գործելակերպն ու գաղափարախոսությունն այսօր էլ շարունակում են ծառայել իբրև ոգեշնչման աղբյուր՝ քուրդ ժողովրդի քաղաքական նպատակները հետապնդող նոր ուժերի համար:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ներկա ատենախոսությունը նպատակ ունի նորահայտ արխիվային վավերագրերի, տպագիր սկզբնաղբյուրների, մամուլի նյութերի, ժամանակակիցների հուշերի և վկայությունների հիման վրա համակողմանի քննության ենթարկել 1920-ականների երկրորդ կեսին քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի մեջ արձանագրված որակական փոփոխությունները, առանձնակի ուշադրություն դարձելով հետևյալ հիմնախնդիրների վրա.

-ուսումնասիրել շեյխ Սայիդի ապստամբությանը հաջորդած տարիներին քրդերի հանդեպ քեմալականների կողմից գործի դրված ռազմական, ոստիկանական, վարչական միջոցառումների ողջ համալիրը՝ Մեծ եղեռնի շրջանում երիտթուրքերի կողմից գործադրված ցեղասպանական քաղաքականության հետ համեմատական քննության միջոցով,

-բացահայտել Արարատի ապստամբության սկզբնավորման շրջանում Թուրքիայի քաղաքականությանը քուրդ ժողովրդի ցուցաբերած ինքնաբուխ դիմադրության հիմնական առանձնահատկությունները,

- վեր հանել Հոյբունի ձևավորման ու ՀՅԴ-Հոյբուն համագործակցության շրջանում երկու ժողովուրդներին ներկայացնող ուժերի միջև ծավալված քաղաքական դիսկուրսը, այդ թվում՝ ոչ վաղ անցյալի սխալները չկրկնելու մասին փոխադարձ հավաստիացումների բովանդակությունը,

- ցույց տալ քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման նպատակների, դրանց իրացման կազմակերպական մեխանիզմների ու գաղափարական հիմնավորումների որակական փոփոխությունները՝ պայքարի հարուստ փորձ ունեցող ՀՅԴ-ի անմիջական ազդեցության շնորհիվ,

- քննության ենթարկել քրդական գործոնն օգտագործելու համար Մերձավոր-Միջին Արևելքում իրենց գաղութներն ունեցող Անգլիայի ու Ֆրանսիայի իրականացրած քաղաքականության առանձնահատկությունները,

- ուսումնասիրել շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո Արարատ լեռան վրա կենտրոնացած քրդերի շարժումը Մեծ Բրիտանիայի դեմ ուղղելու նպատակով 1920-ականների երկրորդ կեսին ԽՍՀՄ-ի մշակած ծրագրերը և ձեռնարկած քայլերը,

- բացահայտել Ռեզա շահի կառավարման տարիներին քրդական շարժման հանդեպ իր ուրույն քաղաքականությունը մշակած Իրանի դիրքորոշումները և Արարատի քրդերին օգնելու նպատակ ունեցող՝ Իրան-ՀՅ Դաշնակցություն գաղտնի համագործակցության ուշագրավ էջերը,

-քննության ենթարկել Արարատի երրորդ ապստամբության ժամանակ Արարատ լեռան շուրջը ծավալված դաժան կռիվների պատմությունը, տարբեր ռազմաճակատներում քրդերի արձանագրած ակնառու հաջողությունները,

- նորովի ներկայացնել Իրանի հանդեպ 1930 թվականին ԽՍՀՄ կիրառած ռազմաքաղաքական շանտաժի հետևանքով Արարատ լեռան լիակատար շրջափակման և թուրքական բանակի կողմից ռազմակալման պատմությունը:

Ուսումնասիրության գիտական նորույթը: Ներկա հետազոտությունը նորույթ է նախ՝ իր ամբողջության մեջ՝ որպես Արարատի ապստամբության պատմության եռամակարդակ քննության առաջին փորձ (թուրք-քրդական դիմակայություն, հայ-քրդական զինակցություն և դրանցով հետաքրքրված Արևմուտքի (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա), ԽՍՀՄ-ի և Իրանի տարածաշրջանային քաղաքականությունների հոլովույթ):

Երկրորդ՝ հաղթահարվել է Արարատի ապստամբության վերաբերյալ մինչ օրս շարադրված աշխատություններին ու հոդվածներին բնորոշ՝ խիստ սահմանափակ աղբյուրագիտական հենքը և գիտական շրջանառության մեջ են դրվել բազմաթիվ ուշագրավ վավերագրեր ինչպես Հայաստանի, այնպես էլ Ռուսաստանի Դաշնության արխիվներից:

Երրորդ՝ Ռուսաստանի արխիվներից հայտնաբերված նոր ու հետաքրքրական փաստերի հիման վրա բացահայտվել են քրդական շարժման հանդեպ՝Կարմիր բանակի հրամանատարության դիրքորոշումների, ինչպես նաև ԽՍՀՄ ՄՊՔՎ-ի (ՕԳՊՍ)[1] գործողությունների բազմաթիվ անհայտ դրվագները:

---

[1] ԽՍՀՄ ձևավորումից հետո ՌՍՖՍՀ-ի ՆԳԺԿ-ին կից Պետական քաղաքական վարչության՝ ՊՔՎ-ի (Государственное политическое управление (ГПУ) при НКВД РСФСР) հիման վրա՝ 1923 թ. նոյեմբերի 15-ին ստեղծվեց ԽՍՀՄ Ժողովրդական կոմիսարների սովետին կից Միացյալ Պետական քաղաքական վարչությունը՝ ՄՊՔՎ-ն (Объединённое государственное политическое управление (ОГПУ) при СНК СССР):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ, ԹԵՄԱՏԻԿ ԵՎ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐԸ: Ժամանակագրական առումով ներկա ատենախոսությունն ընդգրկում է Արարատի ապստամբության ողջ ընթացքը (1926-1930 թթ.), որը որոշ հրապարակումներում տարանջատվում է Արարատի առաջին՝ 1926-1927 թթ., երկրորդ՝ 1928-1929 թթ. և երրորդ՝ 1930 թ. ապստամբությունների: Քրդական շարժման պատմության մեջ այս որակապես նոր երևույթի՝ որպես մեկ ամբողջության համակողմանի ուսումնասիրության նպատակով, ատենախոսության **թեմատիկ** և **աշխարհագրական** շրջանակների մեջ ենք ներառել ոչ միայն Արարատի ապստամբության թատերաբեմում արձանագրած մարտական գործողությունների, այլև Թուրքիայում ու հարևան մի շարք երկրներում (Լիբանան, Իրան, ԽՍՀՄ) տեղի ունեցած քաղաքական ու դիվանագիտական պայքարի քննությունը

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ատենախոսության շարադրանքում լայնորեն օգտվել ենք պատմահամեմատական մեթոդի ընձեռած հնարավորություններից, որը թույլ է տալիս անալոգիաներից անցնելով երևույթների խորքային-էութենական գծերի քննությանը, բացահայտել քրդական շարժման տարբեր հանգրվաններում հանդես եկած քաղաքական կազմակերպությունների և անհատ առաջնորդների գործելակերպի տիպաբանական առանձնահատկությունները:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության դրույթները կարելի է լայնորեն օգտագործել հայ-քրդական հարաբերությունների ներկա հանգրվանում առաջ եկող խնդիրների լուծման նպատակով: Այս առումով կարևոր են երկու ժողովուրդների իրավունքների ճանաչման վրա հիմնված՝ Սևրի պայմանագրի դրույթների ընդունումն իբրև երկկողմ հարաբերությունների հետագա զարգացման ելակետ և հակաթուրք պայքարում միավորվելու ու առկա տարաձայնությունների լուծումն ապագային թողնելու սկզբունքը, որոնցով ժամանակին առաջնորդվել են Հոյբունը և ՀՅ Դաշնակցությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Ատենախոսությունը շարադրվել է Հայաստանի և Ռուսաստանի արխիվներում հայտնաբերված արխիվային փաստաթղթերի հիման վրա, որոնք առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ: Դրանցից առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում վերջերս Փարիզից Հայաստան տեղափոխված ՀՅԴ նշանավոր գործիչ Ռուբենի (Մ.Տեր-Մինասյան) արխիվը, որը հանգրվանել է Հայաստանի Ազգային արխիվի թիվ 1048 ֆոնդում: Նրա առաջին ցուցակի 64-րդ գործը (Քրդական գործը Պարսկաստանում) 34 թերթից բաղկացած տետրակ է, որը շարադրվել է ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովի որոշման իրականացման համար 1929 թ. վերջերին Թեհրան մեկնած Ռուբենի կողմից[2]: Այս ծավալուն փաստաթղթի հայտնաբերումով հաղթահարվել է Արարատի ապստամբության և նրա ղեկավարների շուրջ մինչև վերջերս պահպանվող գաղտնիության շղարշը:

Հայաստանի Ազգային արխիվի 1048 ֆոնդում է պահվում նաև 10 թերթից բաղկացած՝ Ռուբենի 1944 թ. մարտի 8-ի նամակը Եգիպտոսում ԽՍՀՄ արտակարգ և

[2] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թթ. 2-34:

լիազոր դեսպանորդ Նիկոլայ Նովիկովին, որում հետաքրքրական փաստեր են բերվում խորհրդային հատուկ ծառայությունների կողմից Արարատի ապստամբության ղեկավարներից մեկի՝ Արտաշես Մուրադյանի, Արաքսի ափ հրավիրվելու ու նենգաբար ձերբակալվելու պատմության վերաբերյալ[3]:

Արարատի ապստամբության նախնական շրջանի մասին հետաքրքիր տեղեկություններ են պարունակում Սոցիալ-քաղաքական պատմության Ռուսաստանի պետական արխիվում (Մոսկվա) պահվող ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի քաղբյուրոյի նիստերի արձանագրությունների ֆոտոպատճենները: Մասնավորապես 1926 թ. սեպտեմբերի 30-ի նիստի նո. 56 արձանագրությունում քննարկվել է ‘Քրդերի մասին’ հարցը և ընդունվել է համապատասխան որոշում[4]:

Արարատի ապստամբության ընթացքում խորհրդա-թուրքական ու խորհրդա-իրանական սահմանների երկայնքով իրականացված ակտիվ հետախուզության հիման վրա Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի (այսուհետ՝ ԲԳԿԲ) Գլխավոր շտաբի առաջին վարչության պետ Ս. Եպիշևը 1928 թ. հուլիսի 8-ին ու 28-ին զեկուցագրեր է ներկայացրել ԲԳԿԲ Գլխավոր շտաբի պետ, մարշալ Մ. Տուխաչևսկուն: Ուշագրավ է նաև ԱԽՖՍՀ Սահմանային պահպանության վարչության պետ Իվանչենկոյի ու Թուրքիայում ԽՍՀՄ ռազմական կցորդ Կուզնեցովի 1928 թ. հունիսի 16-ի ծավալուն զեկուցագիրը Արարատում պատսպարված քրդերի մասին: Հետաքրքրական է նաև ԲԳԿԲ Գլխավոր շտաբի չորրորդ (հետախուզական) վարչության պետ Յա. Բերզարինի՝ մարշալ Մ. Տուխաչևսկուն ուղղված զեկուցագիրը՝ թուրքական բանակի մարտական հնարավորությունների մասին[5]:

Արարատի ապստամբության ղեկավարներից մեկի՝ Իբրահիմ Հըսգե Թելիի մասին հետաքրքրական տեղեկություններ է պարունակում 1985-ին լույս տեսած “Արտաքին քաղաքականության Բրիտանական փաստաթղթեր” ժողովածուն, որով հաստատվում է այն իրողությունը, որ Արարատ լեռան թուրք-իրանական համատեղ շրջափակումից հետո ապստամբության ղեկավար կորիզը կարողացել է ճեղքել թուրքական բանակի շղթան և հեռանալ տարբեր ուղղություններով[6]:

ՀՅԴ Բյուրոյի “Հրայր Մարուխյան” գրադարանում պահվող Անդրե Ամուրյանի (Տեր-Օհանյան) մինչ օրս չհրապարակված՝ “Կեանքի էջեր”[7] ձեռագիր հուշագրությունը արժեքավոր տեղեկություններ է պարունակում քրդական շարժմանն աջակցելու նպատակով Իրանում ՀՅԴ գործունեության մասին:

Ատենախոսության մեջ օգտագործված արխիվային վավերագրերի հետ միասին, որոշակի արժեք ունեն նաև Արարատի ապստամբության անմիջական մասնակից

---

[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 119, թ. 7:

[4] Տե՛ս Российский Государственный Архив Социально-Политической Истории (РГАСПИ) ф. 17, оп. 3, д. 590.

[5] Տե՛ս Российский Государственный Военно-Исторический Архив (РГВИА), Москва, ф. 37977, оп. 5, дд. 165, 187, 1620.

[6] Տե՛ս Great Britain Foreign Office. British Documents on Foreign Affairs. University Publications of America. 1985.

[7] Տե՛ս Անդրէ Տէր-Օհանեան (Ամուրեան), Կեանքի էջեր, ՀՅԴ Բյուրոյի “Հրայր Մարուխեան” գրադարան, թ. 327:

կամ՝ ժամանակակից քուրդ, թուրք և հայ գործիչների՝ Զինար Սիլոփիի[8], Նուրի Դերսիմիի[9], Մուստաֆա Քեմալի[10], Կարո Սասունու[11], Գ. Աղաբեկովի[12] (Հարությունով) հուշագրություններն ու աշխատությունները:

Արարատի ապստամբության վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն է պարունակվում սփյուռքահայ, խորհրդային ու թուրքական մամուլում: Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում ՀՅԴ պաշտոնաթերթ ‘Դրոշակ’-ում 1925-ից մինչև 1934 թվականը տպագրված տեսությունները, վերլուծականները և այլ նյութերը, որոնցից շատերը շարադրված են Արարատի ապստամբության մասնակից հայ և քուրդ գործիչների կողմից[13]:

Ատենախոսության մեջ օգտագործվել են նաև թուրքական “Միլիեթ”, “Աքշամ”[14] թերթերի, ինչպես նաև Թբիլիսիում լույս տեսնող ռուսալեզու “Զարյա Վոստոկա”[15] թերթի վերլուծականները, մի շարք ինտերնետ կայքերում տեղադրված նյութեր[16]:

Ներկա ատենախոսության թեման տասնամյակներ շարունակ լինելով թուրք պետական գործիչների, քրդական շարժման ու ՀՅԴ առաջնորդների, մասամբ նաև՝ տարածաշրջանում լուրջ շահեր ունեցող պետությունների ուշադրության կենտրոնում, արժանացել է տարաբնույթ գնահատականների ու մեկնաբանությունների: Դրանց հայեցակարգային մեկնակետերը ժամանակի ընթացքում տեղ են գտել նաև պատմագիտական աշխատությունների էջերում:

Արարատի ապստամբության պատմության Թուրքիայի պաշտոնական հայեցակարգը բյուրեղացել է Մուստաֆա Քեմալի[17], Իսմեթ Ինյոնյուի[18] և այլոց հրապարակումների ու հայտարարությունների հիման վրա: Ավելի ուշ շրջանի թուրք հետազոտողներից նրանց տեսակետները հիմնավորելու փորձեր են ձեռնարկել Վեդաթ Շադիլիլին[19], Շերաֆեդդին Թուրանը[20] Ազմի Սուսլուն[21], Օսման Սելիմ Քոջահանօղլուն[22], և ուրիշներ:

---

[8] Տե՛ս Zinar Silopi, Doza Kurdistan, Stewr Basımevı, Beyrut ,1969.

[9] Տե՛ս Nuri Dersimi. Kurdistan Tarihinde Dersim, Halep, 1952.

[10] Տե՛ս Кемаль М., Путь новой Турции, т. 1, Москва, 1929. Мустафа Кемаль, Путь новой Турции, т. 3, Москва, 1934.

[11] Տե՛ս Կարո Սասունի, Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները, տպ. Համազգային, Պէյրութ, 1968:

[12] Տե՛ս Агабеков, Секретный террор, Москва, 1996.

[13] Տե՛ս “Դրօշակ”, Փարիզ,1927, N 7, 1929, N 7:

[14] Տե՛ս “Milliyet”, 19. VI. 1927, İstanbul.

[15] Տե՛ս “Заря Востока”. № 85 (1761), 28.04.1925, Тифлис.

[16] Տե՛ս Партизаны на поводке, www. hist.ru/kurdy.

[17] Տե՛ս Ататюрк, Мустафа Кемаль, Избранные речи и выступления, Москва, 1968.

[18] Տե՛ս İsmet İnönü, Hatıralar, Ankara, Bilgi Yayınevi, 1985, kitap 1-2, 1985.

[19] Տե՛ս Şadillili Vedat, Türkiyede Kürtçülük ve isyanlar. Ankara 1980.

[20] Տե՛ս Turan Şerafettin, Türk devrim Tarihi, Ankara, Bilgi Yayınevi, 1992, kitap 2, Ulusal deriştiren: Türkiye Cümhüriyetine, 341 p..

[21] Տե՛ս Dr. Azmi Süslü. Kürtler ve sosyal gelişmeleri. Ankara 1993.

[22] Տե՛ս Kocahanoğlu, Osman Selim, Atatürk-Karabekir kavgası; kurtuluş, kuruluş ve sonrası, İstanbul, Temel, 2013, 820 p..

Արարատի ապստամբության պատմությունը միշտ էլ եղել է քուրդ հուշագիրների, իսկ հետագայում նաև ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Նրանց հրապարակված գրքերից ուշագրավ են հատկապես ապստամբության ղեկավարներից մեկի՝ Իհսան Նուրիի հուշերը[23], Հոյբունի անդամ Զինար Սիլոփիի[24] մենագրությունը, ինչպես նաև Նուրի Դերսիմիի[25] և Մեհմեդ Շերիֆ Ֆըրաթի[26] աշխատությունները: Ժամանակակից քուրդ հեղինակներից արժեքավոր են ներկայումս Եվրոպայում բնակվող Ռոհաթ Ալաքոմի[27], Ֆաիք Բուլութի[28], Քեմալ Սյուփհանդաղի[29], Մ. Քալմանի[30], Էմին Քարաջայի[31] և Ջեմշիդ Բենդերի[32] ուսումնասիրությունները:

Արարատի ապստամբությունը տարիներ շարունակ գտնվել է սփյուռքահայ քաղաքական գործիչների և ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում: Այս առումով որոշակի արժեք են ներկայացնում ապստամբության մասնակից Կարո Սասունու[33] հետազոտությունը ու մանավանդ՝ 1948 թ. Լոնդոնում լույս տեսած Ա. Սաֆրաստյանի[34] արժեքավոր մենագրությունը:

Խորհրդային պատմագրությունը[35] 1930-ականներից սկսած՝ շրջանցել ու անտեսել է Թուրքիայի Հանրապետության ձևավորման դարաշրջանում հայերի, քրդերի և այլ ճնշված ժողովուրդների իրավունքների ոտնահարման աղաղակող փաստերը: Ուստի խորհրդային հեղինակները բացասական գնահատականներ են տվել Արարատի ապստամբությանը՝ նրա թիկունքում փնտրելով արևմտյան երկրների ու նրանց հետ կապված՝ ՀՅԴ-ի քողարկված ծրագրերը, իսկ որոշ հարցերում էլ կրկնել են թուրքական պատմագրության տեսակետները:

Մինչև 1950-ականների կեսերը արգելքի տակ էր դրված ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլև Թուրքիայի տարբեր ժամանակների կառավարիչների կողմից քրդերի և ասորիների հանդեպ իրականացված կոտորածների ու տեղահանությունների պատմությունը[36]: Հետագայում՝ Թուրքիայի ՆԱՏՕ-ին

---

[23] Տե՛ս İhsan Nuri Paşa, Ağrı Dağı İsyanı, MED Yayıncılık, İstanbul 1992.

[24] Տե՛ս Zinar Silopi, Doza Kurdistan, Stewr Basımevı, Beyrut 1969.

[25] Տե՛ս Nuri Mehmet Dersimi, Kürdistan Tarihinde Dersim, Ani matbaasi, Halep, 1952.

[26] Տե՛ս Mehmet Şerif Fırat, Doğu illeri ve Varto tarihi, M.E.B. Yayıncılık, Ankara 1961.

[27] Տե՛ս Rohat Alakom, Hoybun Örgütü ve Ağrı Ayaklanması, Avesta yayınları, İstanbul, 1998.

[28]Տե՛ս Faik Bulut, Devletin Gözüyle Türkiyede Kürt İsyanları, Yön Yayıncılık, İstanbul, 1991 .

[29] Տե՛ս Kemal Süphandağ, Ağrı direnişi ve Haydaranlılar, Fırat Yayınları, İsranbul, 2001.

[30] Տե՛ս M. Kalman, Belge, tanık ve yaşayanlarıyla Ağrı Direnişi 1926-1930, Peri Yayınları, İstanbul, 1997.

[31] Տե՛ս Emin Karaca, Ağrı Eteklerinde İsyan – Bir Kürt Ayaklanmasının Anatomisı, KaraKutu Yayınları, İstanbul, 2003.

[32] Տե՛ս Cemşid Bender, Genelkurmay Belgerinde Kürt İsyanları, C. 2, Kaynak Yayınları, İstanbul, 1992.

[33] Տե՛ս Կարո Սասունի, Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները, տպ. Համազգային, Պէյրութ, 1968:

[34] Տե՛ս Arshak Safrastyan, Kurds and Kurdistan, The Harvill Press Ltd., London 1948.

[35]Տե՛ս А. Акопов. Курдский вопрос и дашнаки. «Большевик Закавказья». Тифлис 1931:
Տե՛ս նաև՝ Миллер, Анатолий Филиппович, Краткая история Турции, Москва, 1948:

[36] Ավելի մանրամասն տե՛ս Կիրակոսյան Ջ.Ս., Առաջին համաշխարհային պատերազմը և արևմտահայությունը 1914-1916 թթ., Երևան, 1967, էջ 9-10: Տե՛ս նաև Կիրակոսյան, Ջ. Ս.,

անդամակցության փաստի և խրուշչովյան ՝հալոցքի՝ ազդեցությամբ խորհրդային իշխանությունները թույլ են տվել ավելի անաչառ դիրքերից մոտենալ քրդական խնդրին: Ուստի թեմային անդրադարձած Ս. Ս. Ավանեսովն[37] ու Վ. Պ. Նիկիտինը[38] բավականին ճշգրիտ ու առարկայորեն են ներկայացրել քուրդ ժողովրդի հանդեպ քեմալականների իրականացրած բռնաճնշումները, իսկ Արարատի ապստամբությունը գնահատել են որպես դրանց հետևանք:

Բայց անգամ խորհրդային «պերեստրոյկայի» դարաշրջանում Հայաստանում հրապարակված Մ. Հասրաթյանի[39] աշխատության մեջ շարունակում էր շրջանցվել Արարատի ապստամբության ճնշման գործում ԽՍՀՄ-ի ունեցած լուրջ դերակատարության փաստը: Նույն մոտեցումը հիմնականում պահպանվել է անգամ 2005-ին Մոսկվայում լույս տեսած Մ. Լազարևի մենագրության մեջ[40]:

Անցած տարիներին արևմտյան պատմագիտությունը նույնպես սկսել է մեծ ուշադրություն դարձնել 1920-1930-ականներին քուրդ ժողովրդի մղած անհավասար պայքարի պատմությանը՝ հենվելով Իրաքի բրիտանական վարչակազմի ու նրա հետախուզության զեկուցագրերի վրա: Այս առումով ուշագրավ են Ռոբերտ Օլսոնի[41], Մարտին վան Բրյուինեսսենի[42] և Դեյվիդ Մակ Դաուելի[43] աշխատությունները, որոնք բավականին հարուստ փաստեր և վկայություններ են պարունակում Արարատի ապստամբության վերաբերյալ:

Հայաստանի անկախացումից հետո՝ վերջին տասնամյակներում մեր երկրում հրապարակված ուսումնասիրություններում ու հոդվածներում սկիզբ դրվեց հարցի ավելի ամբողջական հետազոտությանը: Այս առումով լուրջ արժեք ունեն պրոֆ. Վ. Բայբուրդյանի[44] աշխատություններն ու հոդվածները: Ուսումնասիրվող հիմնահարցի առանձին պրոբլեմներին անդրադարձել են նաև Արսեն Ավագյանը[45], Ավագ

Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2 (1915-ից մինչև մեր օրերը), Երևան,1983 :

[37] Տե՛ս Аванесов С. С., Положение национальных меньшинств в Турции, Ереван, 1963.

[38] Տե՛ս Никитин В. П., Курды, Москва, 1964.

[39] Տե՛ս Гасратян М. А., Курды Турции в новейшее время, Ереван, 1990.

[40] Տե՛ս Лазарев М. С., Курдистан и курдский вопрос 1923-1945 гг., «Восточная литература», Москва, 2005.

[41] Տե՛ս R. Olson. The Kurdish rebellions of Sheikh Said (1925), Mt. Ararat (1930), and Dersim (1937-8): Their impact on the Development of the Turkish Air Force and on Kurdish and Turkish Nationalism, Die Welt des Islam. New Ser. Vol. 40, issue 1, March 2000.

[42] Տե՛ս Martin van Bruinessen, Agha, Shaikh and State, Utrecht, 1978.

[43] Տե՛ս David McDowall, A modern history of the Kurds. London 2005.

[44] Տե՛ս Բայբուրդյան Վ.Ա., XX դարի 20-30–ական թվականների քրդական ապստամբությունները և թուրք-իրանական հարաբերությունները,՝Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXI, 2002, էջ 5-27, տե՛ս նաև՝ Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005: Տե՛ս նաև՝ Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Երևան, 2008: Տե՛ս նաև՝ Քրդական հարցը հանրապետական Թուրքիայում, Բանբեր Երևանի համալսարանի, 2010, էջ 5-36:

[45] Տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920-1971 թթ., Երևան, 2011:

Հարությունյանը[46], Տաթևիկ Մանուկյանը[47] և այլ հետազոտողներ։ Սակայն, վերը նշված բոլոր ուսումնասիրություններում բացակայում են մեր կողմից օգտագործված և ներկա ատենախոսության աղբյուրագիտական հենքը դարձած՝ Ռուսաստանի Դաշնության արխիվների նյութերը, ինչպես նաև վերջերս Փարիզից ու Թեհրանից Հայաստան տեղափոխված նորահայտ վավերագրերը։

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին բաժանվում են 12 ենթագլուխների, վերջաբանից և օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկից։

Ներածության մեջ հիմնավորվում են թեմայի արդիականությունը, հետազոտության նպատակն ու խնդիրները, բացահայտվում է ուսումնասիրության գիտական նորույթը, հստակեցվում են ատենախոսության ժամանակագրական, թեմատիկ և աշխարհագրական շրջանակները, մեթոդաբանական հիմքը, ինչպես նաև տրվում է օգտագործված աղբյուրների ու գրականության համառոտ տեսությունը։

Ատենախոսության առաջին գլուխը՝ **“ՔԵՄԱԼԱԿԱՆՆԵՐԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ 1926-1927 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ”** բաղկացած է չորս ենթագլուխներից

Առաջին ենթագլխում՝ **“Թուրք-քրդական հարաբերությունները Թուրքիայի Հանրապետության ձևավորման շրջանում (համառոտ ակնարկ)”** ներկայացվում են Առաջին համաշխարհային պատերազմի և Հայոց ցեղասպանության արդյունքում Արևմտյան Հայաստանում ու թուրքական Քուրդիստանում[48] ստեղծված ռազմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական ու ժողովրդագրական կացությունը, քեմալական շարժման ընթացքը և թուրք-քրդական հարաբերություններում արձանագրված տեղաշարժերը՝ Սևրից մինչև Լոզան։ Անդրադարձ է կատարվում քեմալականների ու քրդական վերնախավի շահերի աստիճանական տարանջատման և քրդական ազգային կազմակերպությունների ձևավորման գործընթացին։ Համառոտ կերպով ներկայացվում են նաև քեմալականների տիրապետության դեմ ուղղված քրդական առաջին ընդվզումները։ Ավելի մեծ ուշադրություն է դարձվում ‘Ազադի’ կոմիտեի կողմից ծրագրված քրդական համընդհանուր ապստամբության հասունացման ընթացքին, որը քեմալականների կանխարգելիչ քայլերի արդյունքում սկսվեց 1925 թ. փետրվարի 8-ին։ Այս հանգամանքը, այլ գործոնների հետ միասին, կանխորոշեց շեյխ Սաիդի ապստամբության պարտությունը 1925 թվականի ապրիլի կեսերին։

Երկրորդ ենթագլխում՝ **“Քեմալականների ցեղասպանական քաղաքականությունը և քրդական դիմադրության նոր օջախները 1925-1926 թթ.”** ուսումնասիրության են

---

[46] Տե՛ս Հարությունյան Ա., Ակնարկներ քրդական խնդրի պատմության, Երևան, 2011։

[47] Տե՛ս Մանուկյան Տ., Քրդերի սոցիալ-քաղաքական վիճակը Թուրքիայում 1920-30 թթ., Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIII, Երևան 2004։

[48] Ներկա ատենախոսության մեջ այս հասկացություններով բնորոշվող՝ երկու ժողովուրդների հավակնությունների տարանջատման համար հիմք ենք ընդունել Սևրի պայմանագրով և ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի Իրավարար վճռով գծված սահմանագիծը։

ենթարկվում շեյխ Սաիդի ապստամբության պարտությունից հետո թուրքական իշխանությունների կողմից իրագործված ջարդերն ու բռնի տեղահանությունները: Հատուկ ուշադրություն է դարձվում քեմալականների մշակած հակաքրդական ուղղվածության օրենքների բովանդակությանն ու դրանց կիրարկման ընթացքին: Թուրքիայի իշխանությունները հատկապես կարևորում էին քրդաբնակ մի քանի վիլայեթների միավորումը Առաջին գլխավոր տեսչության մեջ, որի ձևավորման համար հիմք հանդիսացան Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի (այսուհետև՝ ԹԱՄԺ) 1927 թ. հունիսի 25-ին ընդունած թիւ 1164 և որպես դրա լրացում՝ 1927 թ. դեկտեմբերի 27-ի թիւ 5858 օրենքը:

Քեմալականների ձեռնարկած ցեղասպանական գործողություններին զուգահեռ սկսվեց քուրդ ցեղապետերի արտոնությունների վերացումը: Արգելվեցին նաև շարիաթի հիման վրա իրականացվող դատավարությունները, փակվեցին դերվիշական կացարանները, ինչպես նաև քուրդ առաջնորդների դամբարանները (թյուրբեները): Քուրդ երիտասարդությունը զրկվում էր հոգևոր կրթություն ստանալու հնարավորությունից և ուսում ստանալու նպատակով ստիպված էր մեկնել ծովափնյա քաղաքներ՝ բռնելով թրքացման ուղին:

Երրորդ ենթագլխում՝ **“Արարատի առաջին ապստամբությունը (1926-1927 թթ.)”** շարադրվում է քեմալականների կողմից իրագործված ջարդերին ու տեղահանություններին որպես պատասխան՝ Արարատ լեռան վրա ջալալի ցեղային միության հեսեսորի ցեղի առաջնորդ Իբրահիմ Հըսգե Թելլիի (Բրո) կողմից բարձրացված ապստամբության պատմությունը: Ներկայացվում են թուրքական պատժիչ զորքերի դեմ ձեռք բերված առաջին հաղթանակները: Դրանց արդյունքում 1927 թ. աշնանը քրդերը գրավում են Բայազետը: Այսպիսով՝ Հոյբունի ձևավորման և ՀՅԴ-ի հետ համագործակցության հաստատման շրջանում քրդերը դրության տերն էին ոչ միայն Արարատ լեռան վրա, այլև շրջակա մի շարք բնակավայրերում:

Չորրորդ ենթագլխում՝ **“Հոյբունի ձևավորումը և Հոյբուն-ՀՅ Դաշնակցություն համագործակցության սկիզբը”** ներկայացվում է համաքրդական առաջին քաղաքական կազմակերպության՝ Հոյբունի ստեղծման պատմությունը, բացահայտվում է այդ գործընթացում ՀՅԴ ունեցած դերակատարությունը: 1927 թ. հոկտեմբերի 5-ին հայտնի դաշնակցական գործիչ Վահան Փափազյանի տանը, Լիբանանի Բրհամդուն ամառանոցային բնակավայրում տեղի ունեցած համագումարը որոշում կայացրեց ստեղծել համաքրդական Հոյբունական (Անկախական) կուսակցություն: Այն ուներ Գործադիր կոմիտե, որի անդամներն էին Սուրեհյա, Ջելադեթ և Քամուրան Բադրխանները, Մեմդուհ Սելիմ բեյը, Շահին բեյը: 1927-1932 թթ. Հոյբունի առաջին նախագահն էր Ջելադեթ Բադրխանը[49]:

1927 թ. հոկտեմբերի 28-ին Հոյբունը հռչակեց Քուրդիստանի անկախությունը, ինչպես նաև՝ պատերազմ հայտարարեց Թուրքիային: Ժամանակավոր մայրաքաղաք հռչակվեց Արարատի լանջերին գտնվող Քուրդավա գյուղը, իսկ մշտական՝ Դիարբեքիրը[50]: Արարատում Հոյբունի ներկայացուցիչն էր Մեմդուհ Սելիմ բեյը[51]:

---

[49] Տե՛ս Alakom R., ibid., s. 37.

[50] Տե՛ս Safrastyan A., ot. cit., p. 84.

[51] Տե՛ս Alakom R., ibid., s. 42.

Առաջին համագումարում Հոյբունը ընդունեց նաև իր քաղաքական պլատֆորմը, որը փաստորեն գործողությունների ծրագիր էր և բաղկացած էր 5 կետից: Քուրդ հետազոտող Ռոհաթ Ալաքոմի վկայությամբ՝ Հոյբունի և ՀՅԴ-ի միջև կնքվել է նաև 19 կետից բաղկացած համաձայնագիր[52]:

1927 թ. աշնանը Իբրահիմ Հըսգեն և Հոյբունի կողմից որպես ապստամբության ռազմական ղեկավար ուղարկված Իհսան Նուրին Արարատի լանջերին հրավիրեցին քրդական Ազգային ժողով: Այն Արարատի ապստամբների համար դարձավ օրենսդիր ժողով՝ պառլամենտ, որի ընդունած օրենքներր պարտադիր էին բոլորի համար: Կազմավորվեց կառավարություն, որը պետք է վարեր ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործերը, բայց առաջին հերթին՝ մարտական գործողությունները: Իբրահիմ Հըսգեն ու Իհսան Նուրին ժողովի որոշմամբ ստացան փաշայի տիտղոսներ և զբաղեցրին Արարատի քաղաքացիական և զինվորական ղեկավարների պաշտոնները: Արարատում ՀՅԴ առաջին ներկայացուցիչը Արտաշես Մուրադյանն էր (Զիլան բեյ):

Ատենախոսության երկրորդ գլուխը՝ **“ԱՐԱՐԱՏԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ”** բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ **“Արարատի երկրորդ ապստամբության հաղթանակները և դրանց ազդեցությունը Թուրքիայի ներքաղաքական կացության վրա”** ներկայացվում է 1928 թ. մարտին ու սեպտեմբերին Բայազետի մոտ տեղի ունեցած ճակատամարտերի ընթացքը, որոնցում քրդերը պարտության մատնեցին թուրքական զորքերին: Ի պատասխան՝ թուրքերը սկսեցին ոչնչացնել Արարատի շրջակայքի քրդական բնակչությանը: Քրդերի հաղթանակները լուրջ ճգնաժամ ստեղծեցին Թուրքիայում, որին գումարվեց նաև 1929-ին սկսված համաշխարհային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը: Տարաձայնություններ էին առաջացել նաև Թուրքիայի ղեկավար շրջանակներում: Միայն դրանց հաղթահարումից հետո՝ 1930 թ. հունվարի 7-ին Թուրքիայի բանակի գլխավոր շտաբն արձակեց քրդերի դեմ 1930 թ. հունիսից ռազմական գործողությունները վերսկսելու հրամանը:

Երկրորդ ենթագլխում՝ **“Արարատի ապստամբությունը՝ արևմտյան տերությունների (Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա) քաղաքական հաշվարկներում”** ցույց է տրվում, թե ինչու Արարատի ապստամբության շրջանում Մեծ Բրիտանիան և Ֆրանսիան թույլատրում էին, որպեսզի Հոյբունը գործունեություն ծավալի Իրաքում և Սիրիայում: ՀՅԴ-ի խորհրդով Հոյբունի ղեկավարությունը հայտարարել էր, որ իր պայքարը վերաբերվում է միայն Թուրքիային, իսկ Սիրիայի, Իրաքի ու Իրանի հետ պետք է հաստատվեն բարեկամական հարաբերություններ: Ուստի Սիրիայի հանդեպ քաղաքական վերահսկողություն իրականացնող՝ Ֆրանսիան և Իրաքում իշխող Մեծ Բրիտանիան Հոյբունի մեջ իրենց համար վտանգ չէին տեսնում: Ավելին՝ նրանք քրդական գործոնը դիտարկում էին մի կողմից՝ որպես հակակշիռ արաբական ազգայնականության դեմ, իսկ մյուս կողմից էլ իբրև Թուրքիայի ու Իրանի ներքաղաքական կացության վրա ազդելու լծակ:

[52] Տե՛ս Alakom R., ibid., s. 108.

Երրորդ ենթագլխում՝ “**ԽՍՀՄ ղեկավարության և Կարմիր բանակի գաղտնի ծրագրերն Արարատի առաջին և երկրորդ ապստամբությունների շրջանում (1927-1929 թթ.)**” ցույց է տրվում, որ ԽՍՀՄ-ի գլխավոր նպատակը քրդերին բրիտանացիների դեմ օգտագործելն էր՝ ապագա խորհրդա-բրիտանական պատերազմում: Այդ ծրագիրն ավելի լրջորեն սկսվեց քննարկվել, երբ հայտնի դարձավ, որ Իրաքում տեղակայվել են բրիտանական ռազմա-օդային ուժերի խոշոր ստորաբաժանումներ, որոնք մահացու սպառնալիք էին Բաքվի նավթահանքերի համար: Ուստի սկզբնական շրջանում խորհրդային ղեկավարության մեջ չկար միասնական կարծիք այն հարցում, թե ինչպե՞ս պետք է վարվել Մ. Քեմալի և քրդերի դիմակայության հանդեպ: 1927-1928 թվականներից ՕԳՊՈՒ-ն կապեր էր հաստատել Հոյբունի ղեկավարների հետ և անգամ նրանց էր փոխանցել որոշ գումար: Սակայն, երբ Իրանում ՀՅԴ ներկայացուցիչ Եղիշե Իշխանյանի նամակագրությունը ձեռք գցելու և այլ ճանապարհներով պարզվեց, որ ՀՅԴ-ն Արարատն օգտագործում է որպես հենակետ՝ Խորհրդային Հայաստան իր մարդկանց ուղարկելու համար, իսկ ապստամբության ղեկավարներից մեկը ՀՅԴ անդամ Արտաշես Մուրադյանն է, հայազգի չեկիստները գործի անցան: 1929 թ. ամռանը նրանց հաջողվում է կապ հաստատել Արտաշես Մուրադյանի հետ և համոզել իջնել Արարատից՝ զինամթերք և այլ օգնություն ստանալու նպատակով: Սակայն սահմանն անցնելուն պես՝ Սադարակում, Արտաշես Մուրադյանին ձերբակալում են և աքսորում Վորկուտա:

Չորրորդ ենթագլխում՝ **“Արարատի ապստամբությունը և Իրանում ՀՅԴ ներկայությունը որպես խորհրդա-իրանական հարաբերությունների փորձաքար”** ցույց է տրվում, որ թեև Արարատի ապստամբությանը զուգահեռ 1926 թ. Իրանում նույնպես բռնկվեց քրդական ապստամբություն[53], սակայն չնայած դրան, այդ երկրի ղեկավարությունն ի վերջո հանգեց այն եզրակացությանը, որ քրդական շարժման կենտրոնացումը Թուրքիայի տարածքում համապատասխանում է իր շահերին: Մինչ այդ՝ Իրան գործուղված Թիֆլիսի ՕԳՊՈՒ-ի աշխատակից Մինասյանին 1927 թ. հաջողվել էր կաշառել Թավրիզի փոստի բաժանմունքի պաշտոնյաներից մեկին ու ստանալ դաշնակցականների և մուսավաթականների նամակները[54]: Դրանք վերծանվել ու տրամադրվել էին Իրանի պալատական նախարար Թեյմուրթաշին և Թավրիզի թուրքական հյուպատոսին: Ուստի Իրանի հակազդեցությունից խուսափելու համար ՀՅԴ-ն որոշել էր ժամանակավորապես դադարեցնել Արարատի ապստամբությանը օգնության ցուցաբերումը՝ Իրանի տարածքից: Իսկ 1929 թվականի մարտի 17-ին իր աշխատանքները սկսած ՀՅԴ 11-րդ Ընդհանուր ժողովը որոշում կայացրեց՝ քրդական ազատագրական պայքարի մեջ միշտ կանգնել Իրանի տարածքային ամբողջականութեան վրայ[55]: Ավելին՝ 1929 թ. վերջերին կեղծ անձնագրով Իրան ժամանեց Ռուբենը (Տեր-Մինասյան) և տեսակցություն խնդրեց պալատական նախարար Թեյմուրթաշից, որին համարում էին Իրանի փաստացի կառավարիչը: Բանակցությունների հաջող ավարտից հետո Թեյմուրթաշն ու Ռուբենը

---

[53] Տե՛ս Բայբուրդյան Վ. Ա., Իրանի պատմություն (հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը), Երևան, 2005, էջ 608:

[54] Տե՛ս Агабеков Г., указ. соч., с. 206.

[55] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 2:

կազմեցին համատեղ գործողությունների քաղաքական ու ռազմական ծրագրեր: Ու թեև դրանց շուրջ առերևույթ բացակայում էր շահի պաշտոնական համաձայնությունը, սակայն ամենայն հավանականությամբ այն եղել է, քանի որ կարճ ժամանակ անց այդ փաստաթղթերը սկսեցին կյանքի կոչվել: Ռուբենի վկայությամբ՝ ՀՅԴ-ն ձերբակալված Արտաշես Մուրադյանի փոխարեն Արարատ ուղարկեց Վահան Գալստյանին (Վելի բեկ)[56] մի քանի մարտիկների հետ: Իսկ Թեյմուրթաշի հանձնարարականները կատարում էր այդ շրջանի զինվորական հրամանատար Զաֆար Դոուլեն, որը հանդիսանում էր իրանական կառավարության և ՀՅԴ-ի ոչ պաշտոնական կապավորը և իրանական կողմի ներկայացուցիչը: Նրա սպաները Վահան Գալստյանին իր խմբով անցկացրին իրանա-թուրքական սահմանը:

Ռուբենի և Թեյմուրթաշի մշակած համատեղ ռազմական գործողությունների ծրագիրն անհրաժեշտ էր համարում ընդարձակել ապստամբական ուժերի վերահսկած տարածքները: Ուստի Վահան Գալստյանը պետք է ստանար Արարատի հյուսիսային ճակատի հրամանատարի պաշտոնը և փորձեր Դաշբուրունից մինչև Շահթախթ ընկած տարածքում բնակվող թուրք-թաթարական ազգաբնակչությանը դուրս մղել Արաքսի մյուս ափ: Այդ ամենից հետո նրա ուժերը պետք է գրավեին Մարգարա-Իգդիր գիծը, ամրանային Օրկովի, Չինգիլ-Սինակ լեռնանցքներում և Սուրմալուն ու Կողբը նույնպես մաքրեին թաթարներից, որտեղից Վահան Գալստյանը պետք է կապվեր Արագածի փեշերին ծվարած սասունցիների և մշեցիների հետ և նրանցից կամավորական ջոկատներ հավաքագրելով՝ ուղարկեր Արարատ: Իսկ Արարատից հարավ ընկած ուղղության համար որոշվեց այնտեղ բնակվող վեց ցեղերից կազմավորել պաշտպանական ճակատ՝ ճահիճներից մինչև Արծափ: Արարատից արևելք բնակվող Իրանի քրդական ութ ցեղերն էլ միանալով պետք է պաշտպանեին Իհսան Նուրիի և Վահան Գալստյանի թիկունքը՝ չթողնելով թուրքական զորքերի հայտնվելը: Մյուս ուժերը պետք է կտրեին Բայազետի ճանապարհը՝ Վանից և Արճեշից[57]:

Թեհրանում մշակված այս ծրագիրը ոչ մեծ փոփոխություններով ընդունվեց Արարատի կառավարության կողմից, որը կայացրեց հետևյալ որոշումները. 1) զորքերի ընդհանուր հրամանատարը շարունակում է մնալ Իհսան Նուրին, 2) հյուսիսային ռազմաճակատի հրամանատար է նշանակվում Վահան Գալստյանը, 3) բուն Արարատի պաշտպանությունը վստահվում է Բրոյին (Իբրահիմ Հըսգեին), 4) Արարատից հարավ հարձակողական գործողությունները ղեկավարում են Քոռ Հուսեյն փաշայի որդին և Կարոն, որը քրդերի մոտ հայտնի էր Իբրահիմ ծածկանունով[58]:

---

[56] Խոսքը Հայաստանի առաջին հանրապետության բանակի կապիտան Վահան Գալստյանի (Սև Վահանի) մասին է (1879-1956)։ Արարատում Վելի բեկ ծածկանունով հանդես եկած այդ գործչի մասին տե՛ս Ղազար, Կապիտան Վահան Գալստեան (Սեւ Վահան), “Աւօ, Յեղափոխական ալպում”, Գ. շարք, Հալէպ, 1962, թիւ 9 (33), էջ 275-276։

[57] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ.17:

[58] Ամենայն հավանականությամբ խոսքը Կարո Սասունու մասին է։

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ “**ԱՐԱՐԱՏԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԶԻՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ**” նույնպես բաղկացած է չորս ենթագլուխներից։

Առաջին ենթագլխում՝ “**Մարտական գործողությունները 1930 թ. առաջին կեսին և ապստամբների հանդեպ ԽՍՀՄ-ի դիրքորոշման հստակեցումը**” ներկայացվում են քրդական շարժման նոր հաջողությունները 1930 թ. գարնանն ու ամռանը։ 1930 թ. ապրիլի 6-ին Արարատի ապստամբների դեմ ուղարկված թուրքական զորախումբը պարտություն կրեց Քիրեի (Արարատի թամբարդի) մոտ։ Մայիսին կրկին ոտքի կանգնեց 150 հազարանոց ջալալի ցեղային միությունը, որին միացան հայդարան, զիլան, խալիկան և այլ ցեղերը։ Սկսվեց Արարատի III ապստամբությունը, որում նույնպես սկզբնական շրջանում ռազմական հաջողությունը քրդերի կողմն էր։

1930 թ. հունիսի 21-ին քրդերի պատրաստած ծուղակում հայտնվեց Սուբհի փաշայի զորախումբը, որը տվեց շատ ծանր կորուստներ՝ 1700 զերի, 60 գնդացիր, 24 թնդանոթ և 12 ոչնչացված ինքաթիռ[59]։ Իսկ հարավային ռազմաճակատում Կարոն, Քոռ Հուսեյն փաշայի որդիները՝ Աբաղայի, Բերկրիի, Զիլանի և Մանազկերտի ուժերի հետ համատեղ պարտության մատնեցին թուրքերին և գրավեցին Արճեշն ու Զիլանը։

Հյուսիսային ռազմաճակատում Վահան Գալստյանի գլխավորած ուժերը հունիսի վերջին գրավում են Արաքսի ափ-Արալբխներ, Դաշբուրուն-Զորա Քյաթուկ գիծը և ասպատակում Իգդիրի դաշտավայրը՝ մինչև Կաղզվան[60], իսկ թուրքական զորամասերը նահանջում ու պատսպարվում են խորհրդային տարածքում։ Նույն շրջանում Արարատից երկու խմբեր ուղարկվեցին դեպի Խորհրդային Հայաստան, որոնք, սակայն չկարողացան կապվել տեղական ուժերի հետ։ Ուստի՝ Կարմիր բանակը Մարգարա և Իգդալու գյուղերի մերձակայքում կենտրոնացնում է 600 ռուս հեծյալներից բաղկացած մեկ խմբավորում, որը 1930 թ. հուլիսի 8-ին անցնում է սահմանը և օգնում է թուրքական զորքերին՝ հետ նվաճել Իգդիրը[61]։

Ու թեև 1930 թ. հուլիս ամսվա ընթացքում թուրքական զորքերը հարավում վերագրավեցին նաև Զիլանի ձորը՝ կոտորելով տեղի քուրդ բնակչությանը, սակայն, շուտով Բայազետի շրջակայքի լճերի ու ճահիճների շրջանում Սալեհ փաշայի 7500 հոգուց բաղկացած զորախումբը ընկավ շրջապատման մեջ և օգոստոսի 7-11-ի ընթացքում ոչնչացվեց։ Այդ դաժան պարտությունը այնպիսի ցնցող տպավորություն թողեց Անկարայում, որ թուրքական բանակի գլխավոր շտաբի պետ Ֆևզի փաշան (Չաքմաք) որոշում կայացրեց անձամբ մեկնել ռազմաճակատ[62]։

Երկրորդ ենթագլխում՝ **“ԽՍՀՄ-ի պատերազմական շանտաժն Իրանի հանդեպ և Ռեզա շահի քաղաքականության փոփոխությունը”**, ցույց է տրվում, որ 1930 թ. հուլիս-օգոստոսյան մարտերից հետո քեմալականները հանգել էին հետևյալ համոզմունքին. առանց թուրք-պարսկական սահմանի լիակատար շրջափակման պատերազմը երկարաձգվելու է մինչև 1931 թվականի գարուն։ Նման հեռանկարից լրջորեն անհանգստացած էին նաև խորհրդային իշխանությունները, քանզի կոլեկտիվացման

---

[59] Տե՛ս Лазарев М. С., указ. соч., с. 141.

[60] Տե՛ս “Դրօշակ”, Փարիզ, 1930, N 8, էջ 189։

[61] Տե՛ս նույն տեղում, 1930, N 9, էջ 214։

[62] Տե՛ս նույն տեղում, 1930, N 8, էջ 218։

հետ կապված ներքաղաքական իրավիճակի սրման պայմաններում, նրանք վտանգված էին համարում իրենց իշխանությունն Անդրկովկասում: 1930 թ. օգոստոսի վերջին Խորհրդային Միությունը հստակորեն հասկացնել տվեց Ռեզա շահին, որ երբ խոսքը վերաբերում է երկրի անվտանգությանը, ինքը պատրաստ է անգամ պատերազմի: Եվ որպես այդ սպառնալիքի ապացույց՝ խորհրդային զորքերն անցան խորհրդա-իրանական սահմանը[63]: Ռեզա շահը ստիպված էր տեղի տալ և ընդունել Արարատի լիակատար շրջափակման պահանջը:

Միայն այն բանից հետո, երբ Արարատը հայտնվեց լիակատար շրջափակման մեջ, խորհրդային զորքերը դուրս եկան Իրանից:

Երրորդ ենթագլխում՝ "**Արարատի լիակատար շրջափակումը, ապստամբների հեռացումը և թուրքական բանակի հաղթանակը**", ցույց է տրվում, որ մինչ իրանական զորքերը շրջափակել էին թուրք-իրանական սահմանը, Արարատի քրդերը Իհսան Նուրիի և Բրոյի ղեկավարությամբ դեռևս չգիտեին խորհրդա-իրանա-թուրքական գաղտնի համաձայնության մասին և շարունակում էին փոքր խմբեր ուղարկել ընդհուպ մինչև Կարս և Էրզրում[64]: Բայց Թավրիզի դաշնակցական մարմնին հաջողվում է իր անդամներից երկուսին ուղարկել ապստամբների մոտ՝ հայտնելու, որ այլևս պետք չէ օգնություն սպասել Իրանից, այլ միայն Խորհրդային Հայաստանից, որտեղից դաշնակցականները նոր խումբ էին կազմավորելու՝ Արարատ բարձրանալու համար:

Մինչ այդ՝ թուրքական հրամանատարությունը շրջապատելով Արարատը, իր կողմն էր գրավել քրդական ցեղերի մի մասին կամ ապահովել նրանց չեզոքությունը: Եվ միայն Իհսան Նուրին, Բրոն իր ցեղով՝ 1400-1600 վրան, ինչպես նաև հայերը, նախկինի պես շարունակում էին պայքարը թուրքական զորքերի դեմ[65]:

1930 թ. սեպտեմբերի 2-ին (որոշ աղբյուրներում՝ սեպտեմբերի 5-ին), սկսվեց թուրքերի գլխավոր հարձակումը Արարատի վրա, որը տևեց մինչև սեպտեմբերի 15-ը[66]: Քրդերը ծանր կորուստներ պատճառեցին թուրքերին, սակայն նրանց գլխավոր ուժերն արդեն կազմալուծված էին և սեպտեմբերի երկրորդ կեսերին միայն փոքրաթիվ խմբեր էին շարունակում դիմադրությունը: Մինչև վերահաս ձմեռը ապստամբության ճնշումը այնքան էր կարևոր քեմալականների համար, որ այդ նպատակին հասնելու համար նրանք կիրառեցին անգամ քիմիական զենք, որն արգելված էր միջազգային մի շարք կոնվենցիաներով[67]:

Տեսնելով ստեղծված անելանելի դրությունը, սեպտեմբերի կեսերին ապստամբության ղեկավարությունը հավաքվում է խորհրդակցության, որի ժամանակ կարծիքներ կիսվում են: Իհսան Նուրին, որպես կադրային սպա, հասկանում էր, որ անիմաստ է շարունակել դիմադրությունը, որը կհանգեցներ խաղաղ բնակչության ոչնչացմանը և պետք է ճեղքել թուրքական պաշարնման օղակն ու անցնել Իրան: Սակայն ապստամբության մյուս ղեկավարը՝ Իբրահիմ Հըսգեն

---

[63] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ. 27:
[64] Տե՛ս նույն տեղում, թ. 30:
[65] Տե՛ս նույն տեղում, թ.10:
[66] Տե՛ս Гасратян М. А., указ. соч., с. 161.
[67] Տե՛ս Лазарев М. С., указ. соч., с. 142.

(Բրոն) գտնում էր, որ իրենք պետք է ազատվեն խաղաղ բնակիչներից և ոչնչացնելով նրանց՝ հարձակվեն թուրքերի վրա ու կռվեն մինչև վերջին մարդը: Խոսքից անցնելով գործի, Բրոն սպանում է իր հարազատ ցեղից մի քանի տասնյակ մարդկանց՝ ծերերի, կանանց, երեխաների, մինչև որ մյուս շեյխերն ու ցեղապետերը մի կերպ համոզում են նրան դադարեցնել կոտորածը և հնարավորություն տալ անցնել Իրան[68]:

Արարատում մարտերը շարունակվեցին մինչև 1930 թ. սեպտեմբերի 25-ը, որից հետո Իհսան Նուրին սակավաթիվ ուժերով և մեծաքանակ խաղաղ բնակչությամբ կարողացավ անցնել Իրան ու հանձնվել իրանական իշխանություններին: Ապստամբների երկրորդ հատվածին նույնպես հաջողվեց դուրս գալ Արարատից դեպի Բուլանըխ, Ախլաթ, Մուշ, Զիլան, Աբաղա, որտեղ առաջացնելով ապստամբական նոր օջախներ՝ թեթևացրին այնտեղ մնացած Բրոյի և նրա զինակիցների վիճակը[69]: Իր հերթին՝ Խորհրդային Հայաստան անցած Վահան Գալստյանը հավաքագրեց կամավորների նոր ջոկատ: Սակայն նրա գնալու հաջորդ օրը Ի. Նուրին արդեն անցել էր Իրան: Ուստի երբ նա մեկ տասնյակ սասունցիներով վերադառնում է Արարատ, ապստամբությունն արդեն ճնշված էր: Չգտնելով Բրոյին՝ Վահանը նույնպես անցնում է Իրան. նրան բանտարկում են, սակայն կարճ ժամանակ անց ազատ են արձակում[70]:

Հոկտեմբերի սկզբին թուրքական զորքերին հաջողվեց գրավել Քիրեն և Մեծ ու Փոքր Մասիսների ստորոտների մեծ մասը: Քրդերը ցաքուցիվ ջոկատներով Իբրահիմ Հըսգեի գլխավորությամբ մագլցում են Արարատի բարձրադիր՝ ձյունածածկ լանջերը և շարունակում դիմադրությունը: Ձյան գալուն պես թուրքական զորքերի մեծ մասը իջեցվեց Բայազետ ու Իգդիր, և միայն փոքրաթիվ ջոկատներն էին փակում գլխավոր արահետները: Ինչ վերաբերում է Բրոյի ճակատագրին, ապա երկար ժամանակ հաշվվում էր, որ նա զոհվել է Արարատում 1930-1931 թթ. ձմռան ընդհարումներից մեկի ժամանակ:

Սակայն 20-րդ դարի 80-ական թվականներին գաղտնազերծված բրիտանական փաստաթղթերից պարզվում է, որ Իբրահիմ Հըսգեն՝ Արարատի ապստամբության հերոսը, նույնպես անցել է Իրան և միացել իր հարազատ հեսեսորի ցեղին: 1931 թ. գարնան և ամռան ամիսներին նա մասնակցում է Մակուում բռնկված քրդական ապստամբությանը և հուլիսի 25-ին տեղի ունեցած մարտում զոհվում է իր եղբոր հետ միասին[71]:

Չորրորդ ենթագլխում՝ **“Արարատի ապստամբության քաղաքական, տնտեսական և ժողովրդագրական հետևանքները”** ներկայացվում են ապստամբությանը հետևած բռնություններ, ջարդերն ու տեղահանություններ: Քրդերի կորուստներ մեծ էին: Միայն սպանվածների թիվը տատանվում էր 9-15 հազարի սահմաններում, որոնց գերակշիռ մասը խաղաղ բնակիչներ էին: Բայց չնայած այդ ամենին, փոխադարձ վրիժառությունների արդյունքում զգալիորեն նվազել էր նաև թուրքական տարրը:

---

[68] Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 293:
[69] Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 293:
[70] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1048, ց. 1, գ. 64, թ.31:
[71] Տե՛ս Great Britain Foreign Office. British Documents on Foreign Affairs. University Publications of America. 1985. p. 252.

Մինչև Առաջին աշխարհամարտն առկա Վանի, Մուշի, Բիթլիսի 87,000 թրքությունը Արարատի ապստամբության նախօրեին՝ 1926 թ. սկզբներին, փաստորեն արդեն գյություն չուներ[72]: Տեղում մնացած թուրքերը կամ պաշտոնյաներ էին կամ էլ զինվորականներ:

Արարատի ապստամբությունը տարբերվում էր նախորդ ելույթներից՝ և հատկապես շեյխ Սայիդի ապստամբությունից: Դա զուտ ազգային շարժում էր՝ հստակ քաղաքական պահանջներով, այն է՝ թուրքական զորքերի հեռացումը և Քուրդիստանի անկախությունը: Արարատի ապստամբությունը բարձրացրեց քրդերի ազգային ինքնագիտակցությունը, ինչը խափանեց նրանց զանգվածաբար թուրքացնելու քեմալականների ծրագրերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ներկայացվում են Արարատի ապստամբության պատմության ուսումնասիրության հիմնական արդյունքները:

ա) չնայած շեյխ Սայիդի ապստամբության պարտությունից հետո ոչնչացվեց քրդական շարժման ղեկավար կորիզը, սակայն նրանց մի մասը կենտրոնացավ Արարատ լեռան վրա՝ ստեղծելով ապստամբության նոր հենակետ,

բ) 1925-1926 թթ. և հաջորդ տարիներին քեմալականների կողմից քուրդ ժողովրդի դեմ ձեռնարկված պետական ահաբեկչությունն ու համակարգված ճնշամիջոցները թեև իրենց հիմնական գծերով կրկնեցին 1915-ին արևմտահայության հանդեպ երիտթուրքերի գործադրած ցեղասպանական քաղաքականությունը, սակայն, քեմալականների կողմից ֆիզիկական բնաջնջման նպատակը ստորադասվեց հավատակից քրդերին ձուլելու առաջադրանքին,

գ) Հոյբունի ձևավորումն ու ՀՅԴ-Հոյբուն համագործակցությունը քուրդ ժողովրդի ազատագրական պայքարն օժտեց հստակ քաղաքական նպատակներով, որոնք միտված էին Թուրքիայի տարածքում ուժերի կենտրոնացմանը, Իրանի և Իրաքում ու Սիրիայում առկա անգլիական ու ֆրանսիական գաղութային իշխանությունների՝ աջակցության ապահովմանը և անկախ Քուրդիստանի ստեղծմանը՝ Դիարբեքիր մայրաքաղաքով,

դ) այդ համագործակցության արդյունքում քրդական շարժումը հաղթահարեց Օսմանյան կայսրության կազմում ձևավորված իսլամական համերաշխության սկզբունքը և ձեռք բերեց ազգային-ազատագրական պայքարին բնորոշ առանձնահատկությունները,

ե) Իրաքում ու Սիրիայում գործող անգլիական ու ֆրանսիական գաղութային իշխանությունները ձգտում էին քրդական շարժումն օգտագործել իրենց նպատակների համար, ուստի նրանց ձեռնտու էր այդ շարժման ծավալումը Թուրքիայի տարածքում, պայմանով, որ այն պահպանելով իր տեղային բնույթը՝ զերծ մնար միացյալ Քուրդիստանի ստեղծման փորձերից,

զ) ԽՍՀՄ-ը և նրա Կարմիր բանակը Արարատի առաջին և երկրորդ ապստամբությունների շրջանում փորձում էին սիրաշահել քրդերին ու նրանց պայքարն ուղղել Իրաքում հաստատված անգլիացիների դեմ, որպեսզի չեզոքացնեն

[72] Տե՛ս ‘Դրօշակ’, Փարիզ, 1928, N 1, էջ 5:

ԽՍՀՄ հարավային սահմաններին սպառնալու ու մանավանդ՝ Բաքուն ռմբակոծելու նրանց ներուժ կարողականությունը,

է) Իրանի իշխանությունները և անձամբ Ռեզա շահը լրջորեն անհանգստացած էին սեփական երկրում ապրող քրդերի ազգային ձգտումների արթնացման վտանգից, սակայն ՀՅ Դաշնակցության հետևողական աշխատանքների շնորհիվ, գիտակցեցին քրդական գործոնի միջոցով Թուրքիան թուլացնելու խնդրի կարևորությունը և պալատական նախարար Թեյմուրթաշի ջանքերով սկսեցին աջակցություն ցուցաբերել Արարատի ապստամբներին,

ը) Արարատի ապստամբության ծավալմանը զուգահեռ Թուրքիայի ձեռնարկած ռազմա-քաղաքական միջոցառումները բացահայտեցին այդ երկրի խոցելի կողմերն ու թուլությունները, ինչի արդյունքում թուրքական բանակը 1927 թվականից մինչև 1930 թվականի օգոստոսի կեսերը այդպես էլ չկարողացավ հաղթել ապստամբներին ու կրեց մի շարք ծանր պարտություններ,

թ) 1929 թ. վերջերին Իրան այցելած ՀՅԴ ականավոր գործիչ Ռուբենի ու պալատական նախարար Թեյմուրթաշի կազմած քաղաքական ու ռազմական գործողությունների ծրագրերի միջոցով մշակվեց ապստամբության միասնական ռազմավարություն և սկիզբ առավ դրա իրականացումը,

ժ) 1930 թվականի առաջին կեսին ապստամբների արձանագրած նոր հաջողությունները հանգեցրին նրան, որ Արևմտյան Հայաստանի տարածքի մի մասը փաստորեն դուրս եկավ Թուրքիայի վերահսկողությունից, ուստի առանց արտաքին աջակցության այդ երկիրն այլևս անզոր էր ճնշել ապստամբության հիմնական օջախը, որն անընդհատ մատակարարումներ էր ստանում Փոքր Մասիսի լեռնային կածաններով,

ժա) Արարատից քուրդ-հայկական ջոկատները թափանցեցին Խորհրդային Հայաստան. անհանգստանալով կոլեկտիվացման արդյունքում գյուղացիական հուզումների թատերաբեմի վերածված Անդրկովկասում տիրող կացությունից՝ 1930 թ. օգոստոսի վերջերին ԽՍՀՄ-ն իր բանակը մտցրեց Իրան, ինչը հարկադրեց Ռեզա շահին թույլատրել թուրքական զորքերի մուտքը՝ Փոքր Մասիսի արևելյան (իրանական) լանջերը շրջափակելու համար,

ժգ) շրջափակման մեջ հայտնված Արարատի ապստամբները կռվեցին մինչև 1930 թ. սեպտեմբերի կեսերը, որից հետո գերի ընկած խաղաղ բնակչության մեծ մասն ու մարտիկները սպանվեցին, իսկ մի մասը հեռացավ դեպի Իրան,

ժդ) Արարատի ապստամբության ողբերգական ավարտի հիմնական պատճառը 1920 թվականին Հայաստանի առաջին հանրապետության կործանմանը հանգեցրած խորհրդա-թուրքական դաշինքի վերականգնումն էր՝ 1930 թվականին, որն այս անգամ գործադրվեց քուրդ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի դեմ:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում

1. Մուսթաֆա Քեմալի քրդական քաղաքականությունը և շեյխ Սայիդի ապստամբությունը 1925 թ., Լրաբեր հասարակական գիտությունների, 2007, 3, էջ 85-95:
2. Քրդական ազգային-ազատագրական շարժումը քեմալական Թուրքիայում 1920-30-ական թթ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2008, 3, էջ 15-22:
3. Նորահայտ վավերագրեր Արարատի ապստամբության մասին, Լրաբեր հասարակական գիտությունների, 2009,1 (624), էջ 240-245:
4. Արարատի 1926-1930 թթ. ապստամբությունը: ՀՅ Դաշնակցություն-Հոյբուն համագործակցության և տարածաշրջանային զարգացումների համատեքստում, «ՎԷմ» համահայկական հանդես, թիվ 3 (47), 2014, էջ 39-72:

Саиян Арам Сергеевич

НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ БОРЬБА КУРДОВ В ТУРЦИИ И РЕГИОНАЛЬНЫЕ ПРОЦЕССЫ В ПЕРИОД АРАРАТСКОГО ВОССТАНИЯ (1926-1930)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.
Защита состоится 5-го мая 2015 года., в 16,00 часов на заседании специализированного совета 006 “Всемирная история”, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Данная диссертация является первой попыткой всестороннего исследования истории Араратского восстания курдов 1926-1930 гг. на трех уровнях (турецко-курдское противостояние, армяно-курдский альянс и региональная политика западных держав (Великобритании и Франции), а также СССР и Ирана).

В отдельном подразделе первой главы диссертации представлена краткая история турецко-курдских отношений, начиная с конца Первой мировой войны до восстания шейха Саида. Проанализированы причины и уроки поражения этого восстания, а также процесс формирования нового центра курдского сопротивления на горе Арарат в 1926 году- в ответ на проводимую кемалистами политику геноцида.

Далее проанализированы причины армяно-курдского сотрудничества. Съезд, состоявшийся 5-го октября 1927 г. в доме известного деятеля партии АРФ Дашнакцутюн Вагана Папазяна в ливанском курортном поселке Бихамдун, принял решение о создании общекурдской партии Хойбун (Независимость), которая должна была сосредоточить в своих руках централизованное управление Араратским восстанием. Хойбун имел Исполнительный комитет, в состав которого вошли Сурехиа, Джеладет и Камуран Бадрханы, Мемдух Селим бей и Шахин бей. В 1927-1932 гг. первым руководителем партии был Джеладет Бадрхан.

28 октября 1927 г. Хойбун провозгласил независимость Курдистана и объявил войну Турции. Временной столицей была объявлена деревня Курдава на склонах Арарата, а постоянной - город Диарбекир.

Во второй главе работы проанализированы попытки английских и французских колониальных властей использовать курдское движение в своих интересах. Кроме того, раскрыта причина угождения курдов со стороны СССР и Красной Армии в первом и втором этапах восстания. СССР хотел направить курдское движение против англичан и нейтрализовать их способность разбомбить Баку с территории Ирака. Кроме этого, представлены переговоры иранских властей с представителем Дашнакцутюн Рубеном (М. Тер-Минасян) по поводу совместных действий в Турции. Для этой цели Рубен и иранский придворный министр Теймурташ составили два проекта, политический и военный. Характерно, что упомянутые проекты стали единой стратегической базой для дальнейшего развития Араратского восстания.

В третьей главе выясняется, что ответные меры, принятые Турцией параллельно с развитием восстания, не принесли ощутимых результатов. Более того, они выявили уязвимые и слабые места этой страны.

После новых успехов повстанцев в первой половине 1930 года часть территории Западной Армении вышла из-под контроля Турции. Вытесненяя противника из турецкой части Араратской долины курдско-армянские отряды проникли также в Советскую Армению. Они намеревались привлечь в свои ряды новых повстанцев из числа скрывающихся членов Дашнакцутюн, которые проживали в Талине и других населенных пунктах Армении. Такой поворот событий стал поводом для советской власти предполагать, что Дашнакцутюн при поддержке Великобритании стремится спровоцировать массовые беспорядки в Закавказье и завоевать регион.

Беспокоясь из за волны крестьянских волнений на Южном Кавказе, и особенно в Армении, СССР в конце августа 1930 года направил свои войска в Иран, после чего Реза шах уступил и позволил турецким войскам окружить повстанцев со стороны восточных склон Малого Арарата.

Окруженные турецкими войсками курдкие повстанцы и воины Дашнакцутюн сражались до середины сентября. После ожесточенных боев мирное население и повстанцы были уничтожены турецкими войсками, а основные руководители, часть курдских повстанцев, а также армянские воины, скрылись в Иране.

В Заключении приведены основные результаты диссертации.

Aram S. Sayiyan

NATIONAL-LIBERATION STRUGGLE OF THE KURDS IN TURKEY AND REGIONAL DEVELOPMENTS DURING THE ARARAT UPRISING (1926-1930)

Dissertation for the degree of Candidate of Historical Sciences on the specialization of "World History" 07.00.02.
The defense of the dissertation will be held on 5th of May of 2015., at 16:00, at the Meeting of Specialized Council 006 "World History", acting by the Institute of Oriental Studies of NAS RA. Address: 0019, Yerevan, Marshal Baghramyan Ave., 24/4.

SUMMARY

The present study is the first attempt to investigate the Ararat uprising in 1926-1930, upon three-levels (Turco-Kurdish standoff, Armenian-Kurdish alliance and an evolution of regional policies of the Western Powers (Great Britain, France), USSR and Iran).

The short history of the Turkish-Kurdish relations, beginning from the end of the World War I to the rebellion of sheikh Said, is presented in the first chapter of the dissertation as a separate subsection; a light is shed upon the reasons for the latter's failure and the lessons of his defeat. Besides, the reality of formation of new centers (established on the Mount Ararat in 1926) of the Kurdish resistance in response to the genocidal policy of the Kemalists.

Then are analyzed the reasons of initializing the Armenian-Kurdish cooperation. The conference (October 5, 1927) held at the home of the eminent Dashnakist figure Vahan Papazian, in the Bhamdoun settlement of Lebanon decided to found the all-Kurdish Hoyboun (Independent) party. It had to concentrate in its hands the centralized board for promotion of the coordinated leading of the Ararat uprising. The Hoyboun had an Executive Committee with the following members: Sourehia, Djeladet and Kamouran Badrkhans, Memdoukh Selim bei and Shahin bei. The first president of the Hoyboun was Djeladet Badrkhan. The Hoyboun declared on 28 October 1927 the independence of Kurdistan as well as war on Turkey. The village of Kurdava on the slopes of Ararat was declared a temporary capital city, and Diarbekir, permanent.

In the second chapter the attempts of the British and French colonial authorities to exploit the Kurdish movement have been taken up. In addition, the reason of pleasing the Kurds by the USSR and its Red Army in the first and second stages of the uprising is covered. In particular, the USSR was wishing to direct the Kurdish movement against the Englishmen as well as to neutralize their intention to bombard Baku. Besides, there are presented the Iran's authorities negotiations with the representative of Dashnaktsutyun Ruben (M. Ter-MInasyan) concerning united actions in Turkey. Two projects - political and military, were composed by Ruben and the court minister Teimurtash, which are presented in the same chapter. It is typical that the mentioned projects became a united strategic basis for further evolvement of the uprising.

In the third chapter of the work it is revealed that the responsive measures taken by Turkey, in parallel with the evolvement of the uprising, had almost no effect. Furthermore, they brought to light the vulnerabilities and weaknesses of the mentioned country.

A part of the Western Armenia's territory got out of Turkey's control following the new and striking successes of the rebels in the first half of 1930. Forcing the enemy out of the Turkish part of the Ararat valley during the uprising, the Kurdish-Armenian brigades marched Soviet Armenia. They were intending to recruit new units from among the disguised members of the ARF, residing in Talin and in other localities of Armenia. Such a turn of events caused the Soviet authority to think as if ARF was implementing the projects of Great Britain to instigate a riot by the Kurds in the Transcaucasia and to conquer the region.

Worrying from a perspective of sparking wave of rebellion in the Transcaucasia, and especially in Armenia, that became the arena of peasant disturbances, the USSR sent troops to Iran at the end of August of 1930, which made Reza shah yield and allow the Turkish troops to enter Iran in order to encircle eastern slopes of the Little Ararat.

Encircled by the Turkish troops, the rebels of Ararat and the fighters of Dashnaktsutyun combated till the midst of September, after which the captive population and fighters were annihilated by the Turkish troops. Some of the rebels as well Armenian fighters fled to Iran.

In conclusion, are presented the main results of the dissertation.